ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

15 նոյեմբերի 2017 թվականի N 184-Ա

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ ***Կոմիտաս Հունանյանին*** 2017 թվականի նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տասը օրով, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ի N 1093-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար:

2. ***Կոմիտաս Հունանյանի*** վերապատրաստման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ ***Արամ Գրիգորյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի նոյեմբերի 15
ք. Հրազդան